



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՓԱՐՊԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Փարպի համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ. Փարպի, (0232)64303 parpi.aragatsotn@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ՕԳՈՍՏՈՍԻ 2018թվականի N 23

ԳՈՒՀԱՐ ՀԱՄԲԱՐԾՈՒՄՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՓԱՍՏԱՑԻ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «ինքնակամ կառուցված շենքերի և ինքնակամ զբաղեցրած հողամասերի կարգավիճակի մասին» 26.12.2002թ.-ի ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի, 2-րդ կետի պահանջներով, նկատի ունենալով այն հանգամանքը, որ Գոհար Համբարձումյանի կողմից իրենց հատկացված հողամասի քարտեզագրման արդյունքում հաշվառված փաստացի օգտագործվող հողամասը նախատեսված չէ այլ նպատակային և գործառնական նշանակությամբ օգտագործելու համար, չեն խոչընդոտում հողամասերի նպատակային օգտագործմանը, ընդգրկված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման, ինչպես նաև հնագիտական, պատմամշակույթային հողօգտագործողների պահպանության գոտիներում:

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Ճանաչել Գոհար Համբարձումյանի սեփականության իրավունքը Փարպի համայնքում, ըստ կադաստրային քարտեզագրման՝ 148-016 ծածկագրով 0,2419 հա փաստացի օգտագործվող հողամասի նկատմամբ:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքի ղեկավար



ԻՇԽԱՆ ԱՌԱՔԵԼՅԱՆ